ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com    Website: www.westernprelacy.org



## ԹԵՄԻՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆՑ ԱՆԴԱՄՆԵՐ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՂՕԹՔԻ ՕՐՈՒԱՆ

Ղըպտի Ուղղափառ եկեղեցւոյ Սանթա Մոնիքայի Ս. Պետրոս եւ Ս. Պօղոս եկեղեցին Շաբաթ, 3 Մայիսին ժամադրավայրը եղաւ Ուղղափառ եկեղեցիներու երիտասարդական Միութիւններու անդամներուն, որոնք հիւրընկալ եկեղեցւոյ մէջ ունեցան աղօթքի ու հոգեւոր աշխատանքի օր մը: Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի յանձնարարութեամբ, մեր Թեմի եկեղեցիներու երիտասարդական Միութեանց անդամներ եւս մասնակցութիւն բերին այս հանդիպումին, առաջնորդութեամբ Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի Վարիչներ՝ Գերպ. Տ. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեանի եւ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեանի: Կը մասնակցէին, Ղըպտի ու Հայց. Առաքելական եկեղեցիներու կողքին՝ Ասորի, Անտիոքի, Եթովպիոյ եւ Ռուսիոյ Ուղղափառ եկեղեցիներուն ներկայացուցիչները:

Առաւօտեան ժամը 8:30ին տեղի ունեցաւ Ս. Պատարագ, որուն աւարտին, ներկաները ստացան Ս. Հաղորդութիւն: Ապա, եկեղեցւոյ կողքի սրահին մէջ անոնք ունեցան միացեալ ճաշ ու ծանօթացան իրարու:

Պաշտօնական յայտագիրին մաս կը կազմէր շարականներու եւ հոգեւոր երգերու երգեցողութիւն. իւրաքանչիւր եկեղեցւոյ խմբակ ներկայացուց շարականներ: Հիւրընկալ եկեղեցւոյ հոգեւոր հովիւը՝ Հայր Փօլ Մեկալի ողջունեց ներկայ երիտասարդները եւ մասնակից եկեղեցիներուն շնորհակալութիւն յայտնեց հոգիները հարստացնող յայտագիրին իրենց մասնակցութեան համար: Այնուհետեւ, իւրաքանչիւր եկեղեցւոյ մասին տրուեցան հակիրճ տեղեկութիւններ:

Փակման իր խօսքին մէջ, Հայր Փօլ Մեկալի գոհունակութիւն արտայայտեց յայտագիրին յաջողութեան համար եւ նշեց, որ թէեւ մասնակիցները կ'արտայայտուէին ութ տարբեր լեզուներով, սակայն անոնք աղօթեցին միասիրտ, փառաբանելով միեւնոյն Աստուածը, հետապնդելով նոյն նպատակը, այսինքն՝ փառաւորել Յիսուս Քրիստոսը: Ան նաեւ դրուատեց աղօթքի օրուան կազմակերպիչները եւ օրհնութեան խօսքով բարի երթ մաղթեց բոլորին:

# PRELACY YOUTH PARTICIPATE IN ORTHODOX DAY OF PRAISE

On the morning of Saturday, May 3rd, Prelacy youth, under the direction of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, participated in an Orthodox Day of Praise held under the auspices of the Coptic Orthodox Diocese of Southern California and Hawaii. The event was organized and hosted by St. Peter and St. Paul Coptic Orthodox Church in Santa Monica. Among the participants were the Coptic, Syriac, Antiochian, Ethiopian, and Russian Orthodox Churches. The Prelacy youth delegation was headed by Christian Education Department Directors Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian.

The day began at 8:30 a.m. with the celebration of Divine Liturgy in the Coptic Orthodox rite. At the conclusion of the Liturgy all participants received Holy Communion, after which they headed to the adjoining hall for brunch and a meet and greet with members of the sister churches.

The official program consisted of the singing of hymns by the choirs of the ten participating churches. The program began with the Lord's Prayer and welcoming remarks by Pastor of the host church Fr. Paul Megally, who acknowledged and thanked the members of all the churches for sharing in the special day. Subsequently, a brief background was given on each church as the choirs were invited up to offer their songs.

Closing remarks were offered by Fr. Paul who once again thanked all the choirs for attending and for the preparation they undertook to make the event a success. He exclaimed that there were eight languages represented but one heart, one Lord, and one purpose, which was praise for our Lord Jesus Christ. He then thanked the organizers and coordinators for their diligent work in preparation for the event. The program concluded with the Lord's Prayer and the benediction by Fr. Paul.